Հանուն Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո, Ամեն

«…Որովհետև ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի,

և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի»

(Ղուկ 18.9-14)

Հոգեշնորհ Հայր Սուրբ, արժանապատիվ և բարեշնորհ հայրեր, սիրելի հավատավոր քույրեր և եղբայրներ,

Աստծո կամքով և Սուրբ Հոգու շնորհումով նոյեմբերի 13-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, ձեռնադրության քրիստոսահաստատ սուրբ խորհրդի միջոցով 6 նորընծա քահանաներով արժանացանք Հայոց Եկեղեցու օծյալ մշակների շարքերը համալրելու բարձր և պատասխանատու կոչմանը։

Վստահաբար որևէ պատասխանատու առաքելության կոչվելը միանգամից չի լինում, այլ իրենից ենթադրում է նախընթաց մի ճանապարհ։ Հոգևոր ծառայության ասպարեզում պարտադիր պայման է այդ ճանապարհի ընթացքում ճիշտ, փորձառու և սրտացավ մարդկանց ուղեկցությունը։ Ուստի խոսքիս նախամուտին ցանկանում եմ առանձնահատուկ սիրով և ջերմությամբ հիշել և իմ շնորհակալական խոսքը ուղղել բոլոր այն անձանց, ովքեր եղան ինձ համար կյանքի ուսուցիչ, ընկեր և Քրիստոսի լծակից։

Աստծուն սիրել առաջինը սովորեցի իմ **ծնողներից,** որոնք վայրկյան անգամ չվարանեցին ինձ բերելու եկեղեցական ասպարեզ, իսկ այստեղ իմ առաջին քայլերը սկսեցի՝ ներշնչվելով Մարտակերտի հոգևոր Հովիվ՝ **լուսահոգի Տեր Բարսեղ քին. Անդրյանի համեստ ու խոհեմ կերպարով:** Ավարտելով Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, որը իմ խորին համոզմամբ հայ իրականության մեջ ամենալավ ուսումնական հաստատությունն է՝ իր բոլոր թերություններով և առավելություններով հանդերձ, հանդիպեցի իմ կյանքի հաջորդ ներշչման աղբյուրին՝ **Նարեկ սարկավագ Պետրոսյանին**, ով երբեմն ավելի էր հավատում իմ ուժերին, քան ես ինքս։ Միասին անցանք կյանքի կարճ, բայց բավականին հարուստ մի ընթացք, որի պայմանական ավարտին Նարեկ սարկավագը վերափոխվեց երկինք, իսկ իմ կյանքը վերափոխվեց այստեղ։

Ծառայության կոչվելով Հայոց Բանակում՝ երջանիկ բախտավորություն ունեցա ծառայելու Գերաշնորհ **Տեր Վրթանես եպս. Աբրահամյանի** առաջնորդության ներքո, ով **եղավ և այսօր էլ է** ինձ համար հոգևոր ծնող, ավագ ընկեր, և մեծ պատիվ էր **Նրա ձեռամբ ստանալու Քահանայական Սուրբ կոչումը**։ Այսօր շարունակում եմ ծառայել Հայոց

Բանակում ՀՀ ԶՈՒ հոգևոր առաջնորդ՝ **Տեր Մովսես Վրդ. Սարգսյանի** հոգածու առաջնորդությամբ, ում հետ ևս բախտ է վիճակվել դեռևս 2015 թ-ից սկսյալ անցնել հաջողություններով ու փորձություններով լի ծառայության մի ընթացք: Ուզում եմ շնորհակալություն հայտնել նաև Տեր Վարազդատ քին. Նաջարյանին, ով մեր, այսպես կոչված **Նարեկյան ընկերության շրջանակի** անբաժան մի մասնիկն է, և ով պատիվ է արել այսօր իր փորձառությամբ օգնելու իձ իմ անդրանիկ պատարագի ընթացքին, նաև **Պարոն Արշավիր Գաբուջյանին**, ով մշտապես աջակցում է և անկեղծորեն ուրախանում իմ բոլոր ձեռքբերումներով:

Իմ սրտի սերն ու երախտիքն եմ հայտնում կյանքիս ընկերոջը, **Սիրելի տիկնոջս**, ով վայրկյան անգամ չվարանեց հանձնառու լինել՝ ինձ հետ կիսելու և թեթևացնելու քահանայական քաղծր լուծը: Շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր անկեղծորեն ուրախանում են և աղոթում Տիրոջ անարժան ծառայիս համար:

Իրապես մեծ է Քահանայական կոչումը և սքանչելի, բայց անպտուղ է, եթե հիմնված չէ խոնարհության վրա, ուստի իսկապես ուրախ եմ, որ այսօր անդրանիկ Պատարագի Ավետարանը համընկել է Քրիստոսի կողմից տրված խոնարհության դասի հատվածին, որ հետայսու մշտապես պետք է հիշեցնի, որ չկորցնենք այդ կարևոր առաքինությունը:

Այսօրվա ավետարանում Հիսուս պատմում է մի առակ փարիսեցու և մաքսավորի մասին, որին շատերդ քաջատեղյակ եք: Ասում է՝ *«Երկու մարդ տաճար ելան աղոթքի կանգնելու. մեկը՝ փարիսեցի, մյուսը՝ մաքսավոր: Փարիսեցին կանգնած էր մեկուսի և, **ինքն իրեն**, այս աղոթքն էր ասում. «Աստված իմ, շնորհակալ եմ Քեզնից, որ ես նման չեմ ուրիշ մարդկանց, ինչպես՝ հափշտակողները, անիրավներն ու շնացողները, և կամ ինչպես այս մաքսավորը. այլ շաբաթը երկու անգամ ծոմ եմ պահում և տասանորդ եմ տալիս իմ ամբողջ եկամտից»: Իսկ մաքսավորը կանգնած էր մեկուսի և չէր իսկ կամենում իր աչքերը երկինք բարձրացնել, այլ ծեծում էր կուրծքը և ասում. **«Աստվա՛ծ, ների՛ր ինձ՝ մեղավորիս»**: Ասում եմ ձեզ, սա՛ իջավ իր տունը արդարացած, ոչ թե մյուսը. **Որովհետև ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի»:***

Ավետարանական ամենագեղեցիկ և ուսանելի հատվածներից է այս առակը, որպեսզի կարողանանք ավելի ընկալելի դարձնել առակի պատգամը, նախ փորձենք ավելի լավ պատկերացում կազմել գործող անձանց մասին և պատմական այն ժամանակահատվածի մասին, երբ պատմվեց այն:

Փարիսեցիները ներկայացնում էին հրեա-կրոնական մի կուսակցություն, որոնց հիմնական գործը օրենքի ուսումնասիրությունն էր և գործադրումը: Նրանք բավականին ազդեցիկ դիրք ունեին հասարակության մեջ, բայց խորանալով օրենքի տառի մեջ, երբեմն ընկնում էին ծայրահեղությունների մեջ և կատարում էին ավելին,

քան պահանջում էր օրենքը, այս ամենը սնուցում էր նրանց սնափառությունը և հպարտությունը: Օրինակ հրեական օրենքը նախատեսում էր միայն պարտադիր պահք՝ Քավության օրվա համար, բայց նրանք, ովքեր ցանկանում էին առանձնահատուկ արժանիքներ ձեռք բերել, ծոմ էին պահում նաև երկուշաբթի և հինգշաբթի օրերին: Հատկանշական է, որ այդ օրերը **շուկայի օրերն էին,** երբ Երուսաղեմը լի էր գյուղացիներով: Նրանք, ովքեր ծոմ էին պահում, սպիտակեցնում էին Իրենց դեմքերը և մարդկանց առջև էին երևում խոժոռ շորերով, և այդ օրերը իրենց բարեպաշտությունը ունենում էր առավելագույն չափով հանդիսատեսներ:

Նրանք այնքան վստահ էին, որ իրենց այս գործերով պիտի փրկվեին, որ բոլորին նայում էին վերևից: Ասում են, որ մի անգամ Փարիսեցի **Ռաբբի Սիմեոն բեն Զոկայը ասել է**. *«Եթե աշխարհում միայն երկու արդար մարդ կա, ապա ես և իմ որդին այդ երկուսն ենք, եթե կա միայն մեկը՝ դա ես եմ»:*

Հիշենք, որ այդ ժամանակաշրջանում Իսրայելը գտնվում էր Հռոմեական տիրապետության տակ: Ովքե՞ր էիր մաքսավորները. նրանք հարկահավաքներն էին, հիմնականում ազգությամբ հրեա, բայց ատելի էին ժողովրդի աչքին նախ այն պատճառով, որ իրենց ազգակիցներից հարկերը հավաքում էին ոչ թե Իսրայելի, այլ Հռոմի համար, և երկրորդ, նրանք հաճախակի էին դիմում չարաշահումների և ավել գումար գանձում իրենց գրպանի համար, որովհետև հռոմեկան իշխանությունները նրնց վարձից բացի արտոնել էին ինչքան կարող են՝ իրենց համար առանձին շահույթ ստանալ: Մաքսավորները համարվում էին ամենաարհամարված և մեղավոր մարդիկ:

Հիմա վերադառնանք մեզ ծանոթ փարիսեցուն և մաքսավորին: Հիսուսի պատմած առակի Փարիսեցին լիովին տեղավորվում էր փարիսեցիների մասին եղած վերոնշյալ պատկերացումների մեջ: Այո, իսկապես նա ճիշտ էր ասում, որ առաքինի է, կատարում է օրենքն ամբողջությամբ, ծոմ է պահում պահանջվածից ավելի, բայց ինչու նրա աղոթքը լսելի չեղավ Աստծուն: Որովհետև, ինչպես ավետարանական բնագրերից մեկը շեշտադրում է, նա **ինքն իրեն այս աղոթքն էր անում**: Այսինքն փարիսեցին չէր եկել աղոթելու, այլ ինքն իրեն էր աղոթում և եկել էր Աստծուն ներկայացնելու, թե ինչ լավն է ինքը, որ նման չէ ոչ մեկին, առավել ևս իր հետ աղոթքի կանգնած մաքսավորին, ու կարծես թե կարիք էլ չունի Աստծո ողորմության:

Մաքսավորը կոտրված սրտով կանգնած, ինչ-որ տեղ նաև ազդվելով և ամաչելով փարիսեցու հպարտ կեցվածքից, ծեծում էր իր կուրծքը, անգամ չէր համարձակվում գլուխը բարձրացնել և անդադար ողորմություն էր խնդրում: Առակի տրամաբանությունը մեզ հուշում է, որ մաքսավորը իրեն համեմատում էր Աստծո սրբության հետ, քաջ գիտակցում էր իր մեղավոր լինելը և ուներ հստակ որոշում՝ անկյալ վիճակից ոտքի կանգնելու: Միով բանիվ մաքսավորը արժանացել էր առաջին երանիին. ***«Երանի հոգով աղքատներին, որովհետև նրանցն է Երկնքի արքայությունը»:***

Նա հստակ կերպով տեսնում էր իր հոգևոր աղքատությունը: Հարկ է հիշել, որ առակի մեջ հիշված արդարացած մաքսավորի բավականին ցայտուն մի օրինակ ունենք. Մատթեոս ավետարանիչը՝ Ղևի անվանայալ, որ դարձավ Քրիստոսի 12 աշակերտներից մեկը և առաջին ավետարանի հեղինակը:

Ում էր ուղղված այս առակը և որն է այն դասը, որ պիտի սովորենք և կիրառենք մենք մեր կյանքում, և մի՞թե այսօր մեր մեջ էլ չկան փարիսեցիներ ու մաքսավորներ: Ավետարանը պատասխանում է այս երկու հարցերին հստակորեն: Սկզբում ասվում է.***«Այս առակն էլ ասաց ոմանց, որոնք իրենք իրենցով պարծենում էին, թե արդար են, և արհամարհում էին ուրիշ շատերին»,*** իսկ վերջում Հիսուսը եզրակացություն է անում. ***«Որովհետև ով որ բարձրացնում է իր անձը, կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի»:***

Սիրելիներ, Մեր Տերը հստակ կերպով մեզ սովորեցնում է, որ…

- Հպարտ մարդը չի կարող իսկապես աղոթել: Դրախտի դարպասն այնքան ցածր է, որ ոչ ոք չի կարող մտնել այնտեղ, եթե ծնկի չգա.
- Որևէ մեկը, ով արհամարհում է իր մերձավորներին, չի կարող աղոթել: Աղոթքի ժամանակ մենք չպետք է վեր բարձրացնենք մեզ մեր մերձավորներից: Մենք, Աստծո ողորմության գահի առաջ ծնկած, պետք է հիշենք, որ մեկն ենք մեղավոր, տառապող, վշտացած մարդկության մեծ բանակից:
- Եվ վերջապես՝ ճշմարիտ աղոթքը բխում է մեր կյանքը Աստծո կյանքի հետ համեմատելուց: Անկասկած այն ամենը, ինչ Փարիսեցին ասաց, ճշմարիտ էր և նա ընդհանրապես նման չէր այն մքսավորին: Բայց այստեղ հարցն այն չէ, թե **«արդյո՞ք ես նույնքան լավն եմ, որքան իմ ընկերները»,** այլ այն, թե **«Արդյո՞ք ես նույնքան լավն եմ, որքան Աստված»:** Ագլիացի մի աստվածաբան պատմում է. - Մի անգամ ես գնացքով ճանապարհորդեցի դեպի Անգլիա: Երբ մենք անցնում էինք Յորքշիրյան ավազաններով, ես տեսա մի փոքր սպիտակած տնակ և ինձ թվաց, թե փայլում է գրեթե փայլուն սպիտակությամբ: Մի քանի օր անց ես վերադարձա Շոտլանդիա: Ձյունը տեղացել էր ու խորը պառկած էր շուրջբոլորը: Մենք նորից եկանք փոքրիկ սպիտակ տնակի մոտ, բայց այս անգամ նրա ճերմակությունը թանձր ու կեղտոտ էր ու գրեթե մոխրագույն՝ ձյան կուսական սպիտակության համեմատ:

Հետևաբար, սիրելի հավատացյալներ, ամեն ինչ կախված է նրանից, թե ինչի հետ ենք մենք մեզ համեմատում: Ներկա աշխարհում, երբ ամենուր մրցավազքի ասպարեզ է բացված, երբ մանկուց մեզ սնուցում են բոլորից լավը, ամենալավը լինելու ոչ-քրիստոնեական գաղափարաբանությամբ, այս արագընթաց հոսքից հոգնած մի պահ կանգ առնենք և տեսնենք, *որ երբ մենք մեր կյանքը դնում ենք Հիսուս Քրիստոսի կյանքի*

և Աստծո սրբության կողքին, մեզ մնում է միայն մաքսավորի հետ աղաղակել՝ ***«Աստված ողորմիր ինձ՝ մեղավորիս»: Ամեն:***